Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2019 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետի պ/կ՝

Տիգրան Գալստյան

ՎԱՐԿ ՀՄ. 8957-AM

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(«Կենսական նշանակություն ունեցող ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում»)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ

միջև

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) և ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ (Բանկ) միջև ստորագրման օրով թվագրված ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝

Վարկառուն և Բանկը սույնով համաձայնում են հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանված է սույն Համաձայնագրին կից հավելվածում) կազմում են սույն Համաձայնագրի անքակտելի մասը:

1.02. Եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, ապա սույն Համաձայնագրում մեծատառով գործածված եզրույթներն ունեն Ընդհանուր պայմաններում կամ սույն Համաձայնագրի հավելվածում իրենց վերագրված նշանակությունը:

ՀՈԴՎԱԾ II. ՎԱՐԿ

2.01. Բանկը համաձայնում է Վարկառուին տրամադրել տասներեք միլիոն չորս հարյուր հազար եվրո (13,400,000 եվրո), որը ժամանակ առ ժամանակ կարող է փոխարկվել արժույթի փոխարկման միջոցով (Վարկ)՝ սույն Համաձայնագրի 1-ին առդիրում նկարագրված ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանն աջակցելու նպատակով:

2.02. Վարկառուն կարող է մասհանել Վարկի միջոցները սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի համաձայն:

2.03. Միանվագ կոմիսիոն վճարը հավասար է Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդին (0,25%):

2.04. Տարեկան կտրվածքով պարտավորության վճարը հավասար է Վարկի չառհանված մնացորդի մեկ տոկոսի մեկ քառորդին(0,25%):

2.05. Տոկոսը հավասար է Վարկի կողմնորոշիչ դրույքաչափին՝ գումարած փոփոխական սփրեդը կամ նման դրույքաչափ, որը կարող է կիրառվել Վարկի գումարի փոխարկման դեպքում՝ Ընդհանուր պայմանների 3.02(ե) բաժնի համաձայն:

2.06. Վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ը և նոյեմբերի 15-ը:

2.07. Վարկի մայր գումարը պետք է մարվի սույն Համաձայնագրի 3-րդ առդիրում սահմանվող Մարման ժամանակացույցի համաձայն:

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳԻՐ

3.01. Վարկառուն հայտարարում է Ծրագրի նպատակների իրականացման իր հանձնառության մասին: Այդ նպատակով Վարկառուն Ծրագիրն իրականացնում է ՏԿԵՆ-ի միջոցով՝ Ընդհանուր պայմանների V հոդվածի դրույթների և սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի համաձայն:

ՀՈԴՎԱԾ IV. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

4.01. Ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայմանները հետևյալներն են.

ա) գործառնական ձեռնարկի թարմացում և հաստատում Վարկառուի կողմից, ՏԶԵՆ-ի միջոցով, Բանկի համար ընդունելի ձևով և

բ) սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի I.A.I բաժնում նշված աշխատակազմի ստեղծում:

4.02. Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը սույն Համաձայնագրի ստորագրման օրվանից հետո հարյուր ութսուն (180) օր է:

ՀՈԴՎԱԾ V. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ՀԱՍՑԵՆԵՐ

5.01. Վարկառուի ներկայացուցիչը Ֆինանսների նախարարությունն է:

5.02. Ընդհանուր պայմանների 10.01-ին բաժնի համաձայն՝

ա) Վարկառուի հասցեն է՝

Ֆինանսների նախարարություն

Մելիք Ադամյան 1

Երևան, 0010

Հայաստանի Հանրապետություն

բ) Վարկառուի էլեկտրոնային հասցեն է՝

Ֆաքսիմիլ՝	Էլ. փոստ՝
+37411800132	secretariat@minfin.am

5.03. Ընդհանուր պայմանների 10.01-ին բաժին համաձայն՝

ա) Բանկի հասցեն է՝

International Bank for Reconstruction and Development

1818 H Street, N.W.

Washington, D.C. 20433

United States of America և

բ) Բանկի էլեկտրոնային հասցեն է՝

Տելեքս՝	Ֆաքսիմիլ՝	Էլ. փոստ՝
248423(MCI) կամ 64145(MCI)	1-202-477-6391	sbossoutrot@worldbank.org

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ է ստորագրման ամսաթվի դրությամբ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____

Լիազորված ներկայացուցիչ
Անուն՝ Ատոմ Ջանջուղազյան
Պաշտոն՝ ֆինանսների նախարար
Ամսաթիվ՝ 10.10.2019 թ.

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿ

_____

Լիազորված ներկայացուցիչ
Անուն՝ Սիլվի Կ. Բոսութրոո
Պաշտոն՝ երկրի ղեկավար
Ամսաթիվ՝ 10.10.2019 թ.

ԱՌԴԻՐ 1
Ծրագրի նկարագրություն

Ծրագրի նպատակն է ընտրված կենսական նշանակություն ունեցող ճանապարհները բարելավելու միջոցով բարելավել շուկաների և ծառայությունների հասանելիությունը գյուղական համայնքների համար և ուժեղացնել Վարկառուի՝ ճանապարհների համար պատասխանատու համապատասխան նախարարության կարողությունները՝ կենսական նշանակություն ունեցող ճանապարհային ցանցը կառավարելու համար:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

<u>Մաս 1.</u> **<u>Կենսական նշանակություն ունեցող ճանապարհների բարելավում</u>**

ա) Կենսական նշանակության ճանապարհային ցանցում մոտ 450 կմ երկարությամբ ընտրված ճանապարհների բարելավման աշխատանքների կատարում:

բ) i) Պիլոտային սկզբունքով հիմնանորոգման և ընթացիկ պահպանման աշխատանքների իրականացում Կենսական նշանակություն ունեցող ճանապարհային ցանցի մոտ 23.4 կմ երկարությամբ ընտրված հատվածներում՝ Հիմնանորոգման և պահպանման պայմանագրի պայմանների համաձայն, և ii) Հիմնանորոգման և պահպանման երկու պայմանագրի շրջանակում մոտ 23 կմ երկարությամբ՝ ընտրված կենսական նշանակություն ունեցող ճանապարհների հիմնանորոգում և ընթացիկ պահպանում:

գ) Ծրագրի շրջանակում հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով մանրամասն նախագծային ուսումնասիրության, տեխնիկական հսկողության աշխատանքների և անկախ տեխնիկական աուդիտի իրականացում:

դ) Ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում, այդ թվում՝ i) ճանապարհի՝ վտանգավորության բարձր աստիճան ունեցող հատվածների բարելավում, ii) Ծրագրի շրջանակներում հիմնանորոգված բոլոր ճանապարհներին «Ապահով գյուղերի» իրականացման հետ կապված աշխատանքներ և iii) ճանապարհային նշանների ձեռքբերում և տեղադրում:

Մաս 2. Ծրագրի կառավարում և ինստիտուցիոնալ ուժեղացում

ա) Ծրագրի համակարգման ու իրականացման նպատակով աջակցության տրամադրում՝ i) Ծրագրի կառավարման ու մշտադիտարկման համար պահանջվող գործառնական ծախսերի ֆինանսավորման միջոցով, ինչպես նաև ii) Ծրագրի ֆինանսական աուդիտի իրականացման միջոցով:

բ) i) Ճանապարհային ակտիվների կառավարման համակարգի տեղեկատվական բազայի ձեռքբերում, այդ թվում՝ տեղադրում և ՏԿԵՆ-ի անձնակազմի՝ նշված տեղեկատվական բազայի օգտագործման մասով վերապատրաստում, ii) ճանապարհային պայմանների և երթևեկության ուսումնասիրման նպատակով ճանապարհների հետազոտման սարքավորումների ձեռքբերում, iii) Ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների որակի փորձարկման նպատակով ճանապարհների համար լաբորատոր սարքավորումների ձեռքբերում և iv) կենսական նշանակություն ունեցող ճանապարհային ցանցի վերաբերյալ տեղեկության հավաքում ճանապարհային ակտիվների կառավարման համակարգի համար:

գ) Ճանապարհային երթևեկության անվտանգության ծրագրի իրականացում, ի թիվս այլ հարցերի՝ i) ճանապարհների վտանգավոր հատվածների բարելավման աշխատանքների համար մանրամասն նախագծերի մշակում, ii) տեխնիկական աջակցության և վերապատրաստման ծրագրերի տրամադրում ՏԿԵՆ-ի և Ճանապարհային ոստիկանության ճանապարհային անվտանգության կառավարման հարցերով անձնակազմի համար, iii) ճանապարհային անվտանգության կրթական ծրագրերի իրականացում Ծրագրում ընդգրկված «Ապահով գյուղերի» դպրոցներում, iv) Կենսական նշանակություն ունեցող ճանապարհային ցանցի հետ կապված ճանապարհային երթևեկության անվտանգության քարոզարշավների իրականացում, v) Ճանապարհային երթևեկության անվտանգության գործողությունների ծրագրի մշակում vi) Ծրագրի մաս 2(գ) v կետի ներքո մշակված Գործողությունների ծրագրի ընտրված միջոցառումների իրականացում և vii) ավտոտրանսպորտային պատահարների մասին տվյալների հավաքման և կառավարման համակարգ և Ճանապարհային ոստիկանության, ՏԿԵՆ-ի և մյուս գործընկերների համար

համակարգի օգտագործման վերաբերյալ թեմայով վերապատրաստումների իրականացում:

դ) Տեխնիկական աջակցության տրամադրում, ի թիվս այլ հարցերի՝ i) կատարողականի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ ճանապարհների հիմնանորոգման ու պահպանության համար տեխնիկատնտեսական իրագործելիության ուսումնասիրության իրականացման, այդ թվում՝ առնվազն մեկ ճանապարհային հատված որոշելու հարցում, ii) Ծրագրի հետ կապված սոցիալական մշտադիտարկման և գնահատման, ինչպես նաև ճանապարհային ոլորտի ֆինանսական կայունության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման հարցում, iii) ՏԿԵՆ-ի աշխատակազմի և տեղական կապալառուների վերապատրաստման տրամադրման հարցում՝ Ծրագրի նոր գաղափարների, այդ թվում՝ կատարողականի վրա հիմնված բազմամյա պայմանագրերի նախագծման ու իրականացման, արդյունավետ նախագծման ստանդարտների և ՏԿԵՆ-ի անձնակազմի համար պլանավորման ու պայմանագրերի մշտադիտարկման վերաբերյալ, iv) ճանապարհային ոլորտում հետագա հնարավոր ներդրումների նախապատրաստման համար պահանջվող տեխնիկական ուսումնասիրությունների իրականացման և մանրամասն նախագծերի մշակման հարցում, v) Կենսական նշանակություն ունեցող ճանապարհային ցանցի համար ռազմավարական զարգացման պլանի մշակման հարցում և vi) ճանապարհային հատվածի համար աղետներին պատրաստվածության խթանման, այդ թվում՝ նաև ճանապարհային ենթակառուցվածքի համար բնական վտանգների ռիսկի գնահատման հարցում:

<u>Մաս 3</u>. <u>Արտակարգ իրավիճակներում արձագանքելու բաղադրիչ</u>

Անհրաժեշտության դեպքում օժանդակության տրամադրում թույլատրելի արտակարգ իրավիճակների դեպքում:

ԱՌԴԻՐ 2

Ծրագրի իրականացում

Բաժին I. Իրականացման մեխանիզմներ

Ա. Ինստիտուցիոնալ մեխանիզմներ

1. Մինչև Ծրագրի ավարտը Վարկառուն ՏԿԵՆ-ում կպահի հիմնական աշխատակազմ՝ Բանկի համար ընդունելի գործառույթներով, փորձով, պարտականություններով և որակավորումներով, որը պատասխանատու կլինի Ծրագրի կառավարման, համակարգման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման համար, և ի թիվս այլ մասնագետների՝ կներառի Ծրագրի համակարգող, ֆինանսական կառավարման մասնագետ, գնումների մասնագետ, բնապահպանական և սոցիալական երաշխիքների մասնագետ, ինչպես նաև ճանապարհային ինժեներ, ինչպես սահմանվում է Գործառնական ձեռնարկում:

2. Ծրագրի՝ ճանապարհաշինական աշխատանքների նախագծման և շինարարության շրջանակներում Վարկառուն թույլ կտա կիրառել Ճանապարհների և մայրուղիների նախագծման և շինարարության համար Ստանդարտացման եվրոպական կոմիտեի կողմից առաջարկվող ստանդարտները (ի լրումն ազգային ստանդարտների):

3. Ծրագրի մաս 2 (գ)(vii)-ի իրականացման նպատակով, ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս հետո, Վարկառուն ՏԿԵՆ-ի միջոցով համաձայնագիր («Համագործակցության համաձայնագիր») կկնքի Ճանապարհային ոստիկանության հետ՝ Բանկի համար ընդունելի պայմաններով: Բացառությամբ այն դեպքերի, երբ Վարկառուն և Բանկը գրավոր այլ համաձայնություն են ձեռք բերում, մյուս դեպքերում Վարկառուն չեղյալ չի ճանաչի, փոփոխի, կասեցնի, հրաժարվի կամ այլ կերպով չի ձախողի Համագործակցության համաձայնագրի կամ վերջինիս դրույթներից որևէ մեկի կատարումը:

Բ. Գործառնական ձեռնարկ

1 Վարկառուն պետք է.

ա) թարմացնի և հաստատի Բանկի համար ընդունելի Գործառնական ձեռնարկը, որը կներառի Ծրագրի իրականացման կանոնները, մեթոդները, ուղեցույցները, ստանդարտ փաստաթղթերը և ընթացակարգերը, այդ թվում՝ նաև հետևյալը. i) Ծրագրի իրականացման աշխատանքների մանրամասն նկարագրությունը և Ծրագրի իրականացման մանրամասն ինստիտուցիոնալ մեխանիզմները, ii) Ծրագրի շրջանակում հիմնանորոգման ենթակա և/կամ պահպանման ենթակա ճանապարհային հատվածների ընտրության չափորոշիչները՝ տնտեսական վերադարձելիության և/կամ սպասարկվող բնակչության թվաքանակի հիման վրա և/կամ Ծրագրի համար ներդրված այլ չափորոշիչների վերլուծության հիման վրա, iii) ուղեցույցներ հնարավոր մշակութային կամ հնագիտական արժեք ներկայացնող օբյեկտների անսպասելի հայտնաբերման դեպքերի համար, iv) Ծրագրի վարչական, հաշվապահական հաշվառման, աուդիտի, հաշվետվությունների ներկայացման, ֆինանսական (այդ թվում՝ կանխիկի հոսքերին առնչվող հարցերի), գնումների և հատկացումների ընթացակարգերը, v) Ծրագրի մշտադիտարկման ցուցանիշները, vi) ԲԿՇ-ն ու ՎՔՇ-ն և vii) Արտակարգ իրավիճակներում արձագանքելու գործառնական ձեռնարկը: Գործառնական ձեռնարկի ցանկացած դրույթի և սույն Համաձայնագրի միջև հակասության դեպքում գերակայում են սույն Համաձայնագրի դրույթները, և

բ) Ծրագիրը կիրականացնի Գործառնական ձեռնարկի համաձայն:

2. Բացառությամբ այն դեպքերի, երբ Վարկառուն և Բանկը գրավոր այլ համաձայնություն են ձեռք բերում, Վարկառուն չեղյալ չի ճանաչում, չի փոփոխում, չի կասեցնում, չի հրաժարվում կամ այլ կերպով չի ձախողում Գործառնական ձեռնարկի կամ վերջինիս դրույթների կատարումը:

Գ. Երաշխիքներ

1. Վարկառուն ՏԿԵՆ-ի միջոցով իրականացնում է Ծրագիրը՝

ա) ԲՍԿՇ-ի համաձայն և, հետևաբար, իրականացնում է համապատասխան ԲՍԿԾ-ները՝ Բանկի համար ընդունելի պայմանների և կարգի համաձայն՝ ապահովելով, որ ճանապարհային ցանկացած հատվածում աշխատանքներ չսկսվեն, եթե Վարկառուի կողմից չի պատրաստվել և չի

ներկայացվել, քննարկվել ու Բանկի կողմից չի հաստատվել համապատասխան ճանապարհային հատվածի ԲՍԿԾ-ն, և

բ) ՏՔՇ-ի համաձայն, և եթե որոշակի ճանապարհային հատվածների համար նախատեսվի տարաբնակեցում, ապա կիրականացվի տարաբնակեցման գործողությունների համապատասխան ծրագիրը կամ սեղմ ծրագիրը, ըստ անհրաժեշտության, Բանկի համար ընդունելի պայմանների և կարգի համաձայն՝ ապահովելով, որ կոնկրետ ճանապարհային հատվածում շինարարական աշխատանքներ չսկսվեն, եթե Բանկի կողմից նախապատրաստված և հաստատված ու Վարկառուի կողմից իրականացված չեն համապատասխան ճանապարհային հատվածի համար տարաբնակեցման գործողությունների համապատասխան ծրագիրը կամ սեղմ ծրագիրը:

2. Վարկառուն ՏԿԵՆ-ի միջոցով կապահովի, որ. i) Ծրագրի շրջանակներում պահանջվող ցանկացած խորհրդատվության տեխնիկական առաջադրանքը Բանկի կողմից ուսումնասիրվելուց հետո ընդունելի լինի վերջինիս համար, և ii) այդ նպատակով նման տեխնիկական առաջադրանքը պետք է հավուր պատշաճի ներառի Բանկի երաշխիքների քաղաքականությունը, որոնք կիրառվում են նման տեխնիկական աջակցության միջոցով տրամադրվող խորհրդատվության մասով, այդ թվում՝ նաև Բանկի երաշխիքների քաղաքականության համաձայն՝ բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումների մասին հանրության իրազեկման և խորհրդակցության իմաստով:

Դ. Արտակարգ իրավիճակում արձագանքելու բաղադրիչ

1. Հնարավոր թույլատրելի արտակարգ իրավիճակին անմիջապես արձագանքելու համար Ծրագրի 3-րդ մասի պատշաճ և ժամանակին իրականացումն ապահովելու նպատակով Վարկառուն կնախաձեռնի բոլոր միջոցները, որոնք պահանջվում են իրենից՝ Ծրագրի 3-րդ մասի իրականացումը հետևյալ դրույթների համաձայն ապահովելու նպատակով.

ա) Վարկառուն պետք է .

i) Մշակի ձեռնարկ (Արտակարգ իրավիճակներում արձագանքելու գործառնական ձեռնարկ), որը կհանդիսանա Գործառնական ձեռնարկի

հավելված, սահմանելով Ծրագրի 3-րդ մասի մանրամասն իրականացման մեխանիզմները, այդ թվում նաև՝ (Ա) նշելով ռեսուրսների նպատակը, որոնք պետք է տեղաբաշխվեն, այն կառույցը, որը պատասխանատու կլինի Ծրագրի 3-րդ մասի համակարգման և իրականացման համար (Համակարգող մարմին), (Բ) որոշակի ճանապարհային հատվածում ներդրումները, որոնք կարող են ներառվել Ծրագրի 3-րդ մասի շրջանակներում, արտակարգ իրավիճակներում պահանջվող ծախսերը, ինչպես նաև առաջադրվող ընթացակարգերը, (Դ) գնման մեթոդները և հավակնության ընթացակարգերը Ծրագրի 3-րդ մասի շրջանակներում ֆինանսավորման ենթակա՝ արտակարգ իրավիճակներում կատարվող ծախսերը (Ե) արտակարգ իրավիճակներում կատարվող ծախսերի մասհանման համար պահանջվող փաստաթղթերը և (Զ) ցանկացած այլ մեխանիզմ, որն անհրաժեշտ է Ծրագրի 3-րդ մասի համակարգման և իրականացման համար։

ii) Ժամանակ առ ժամանակ Բանկի դիտարկմանը ներկայացնի առաջարկներ՝ Արտակարգ իրավիճակներում արձագանքելու գործառնական ձեռնարկը փոփոխելու և թարմացնելու նպատակով, քանի որ դրանք կարող են անհրաժեշտ լինել Ծրագրի իրականացման ընթացքում, որպեսզի անհրաժեշտության դեպքում միջոցառումները ներառվեն Ծրագրի 3-րդ մասում՝ թույլատրելի արտակարգ իրավիճակներում արձագանքելու նպատակով։

iii) Ապահովի, որ Ծրագրի 3-րդ մասն իրականացվի Արտակարգ իրավիճակներում արձագանքելու գործառնական ձեռնարկի համաձայն՝ պայմանով, որ Արտակարգ իրավիճակներում արձագանքելու գործառնական ձեռնարկի դրույթների և սույն Համաձայնագրի միջև ցանկացած անհամապատասխանության դեպքում գերակայությունը կտրվի սույն Համաձայնագրի դրույթներին, և

vi) Չփոփոխի, կասեցնի, դադարեցնի, չեղարկի Արտակարգ իրավիճակներում արձագանքելու գործառնական ձեռնարկը կամ դրանից հրաժարվի՝ առանց Բանկի նախնական հաստատման։

բ) Վարկառուն պետք է Ծրագրի իրականացման 3-րդ մասի ողջ ընթացքում պահի Համակարգող մարմին՝ պատշաճ թվաքանակով և որակավորում ունեցող աշխատակազմով ու ռեսուրսներով համալրված, որոնք կբավարարեն Բանկի պահանջները:

Բաժին II. Ծրագրի մշտադիտարկում, հաշվետվողականություն և գնահատում

Ա. Վարկառուն ՏԿՏՏՆ միջոցով Բանկին է ներկայացնում Ծրագրի յուրաքանչյուր հաշվետվությունը օրացուցային յուրաքանչյուր կիսամյակի ավարտից ոչ ուշ, քան քառասունհինգ (45) օր հետո, որը կընդգրկի տվյալ օրացուցային կիսամյակը:

Բաժին III. Վարկային միջոցների առհանում

Ա. Ընդհանուր

Առանց Ընդհանուր պայմանների II հոդվածի դրույթների շրջանակներում սահմանափակումների, ինչպես նաև Հատկացումների և ֆինանսական տեղեկատվական գրության համաձայն՝ Վարկառուն Վարկային միջոցները կարող է մասհանել՝ ա) Թույլատրելի ծախսերը ֆինանսավորելու և բ) միանվագ կոմիսիոն վճարը վճարելու համար, համաձայնեցված առավելագույն սահմանաչափով լողացող տոկոսադրույքի կամ տոկոսադրույքի միջանցքի համար՝ տրամադրված գումարի չափով և կիրառելի լինելու դեպքում հետևյալ աղյուսակում բերված կատեգորիաներից յուրաքանչյուրի տոկոսի չափով:

Կատեգորիա	Վարկի հատկացված գումարը (արտահայտված եվրոյով)	Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսադրույքը (ներառյալ հարկերը)

1) Ապրանքներ, աշխատանքներ, վերապատրաստում, գործառնական ծախսեր, ոչ խորհրդատվական ծառայություններ և խորհրդատվական ծառայություններ Ծրագրի 1-ին և 2-րդ մասերի շրջանակներում	13,366,500	80%
2) Ծրագրի 3-րդ մասի շրջանակներում արտակարգ իրավիճակներում կատարվող ծախսեր	0	100%
3) Միանվագ կոմիսիոն վճար	33,500	Սույն Համաձայնագրի 2.03-րդ բաժնի համաձայն վճարման ենթակա գումար՝ Ընդհանուր պայմանների բաժին 2.07 (բ)-ի համաձայն:
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	**13,400,000.00**	

Բ. Գումարի առհանման պայմանները, առհանման ժամանակաշրջանը

1. Անկախ վերոնշյալ բաժնի Ա մասի դրույթներից՝ Վարկային հաշվից որևէ առհանում չի կատարվում՝

ա) այն վճարումների համար, որոնք կատարվել են մինչև սույն Համաձայնագրի կնքման ամսաթիվը՝ բացառությամբ մինչև 2,700,000 եվրոն չգերազանցող համախառն գումարով առհանումները կարող են կատարվել այն վճարումների համար, որոնք կատարվել են մինչ սույն ամսաթիվը, սակայն 2019 թ. ապրիլի 3-ին կամ դրանից հետո կատարված թույլատրելի ծախսերի համար կամ

բ) 2-րդ կատեգորիայի շրջանակներում արտակարգ իրավիճակներում կատարվող ծախսերի համար, քանի դեռ Բանկին գոհացնում են, և վերջինս Վարկառուին տեղեկացրել է իր գոհունակության մասին առ այն, որ բոլոր հետևյալ պայմանները բավարարվել են հիշյալ ծախսերի մասով.

i) Ա) Ստացողը որոշել է, որ թույլատրելի արտակարգ դեպք է տեղի ունեցել, (Բ) Բանկին հայտ է ներկայացրել՝ նման միջոցառումները Ծրագրի 3-րդ մասում (չնախատեսված արտակարգ իրավիճակներին արձագանքելու բաղադրիչում) ներառելու համար, որպեսզի արձագանքի հիշյալ արտակարգ իրավիճակին, և (Գ) Բանկը համաձայնել է նման բնորոշմանը, ընդունել է հիշյալ հայտը և ծանուցել է Վարկառուին.

ii) Ստացողը (Ա) թարմացրել է ԲՍԿՇ-ն՝ ներառելով Ծրագրի 3-րդ մասին առնչվող դրույթները, (Բ) պատրաստել է, հրապարակել և խորհրդակցել երաշխիքների բոլոր գործիքների մասով, որոնք պահանջվում են հիշյալ միջոցառումների համար, և Վարկառուն ապահովել է, որ ցանկացած միջոցառում, որը պահանջվում է Ծրագրի 3-րդ մասով և (Գ) ապահովել է, որ ցանկացած գործողություն, որը պահանջվում է ձեռնարկել հիշյալ երաշխիքների գործիքների շրջանակներում, իրականացվի սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի բաժին I. Գ-ի դրույթների համաձայն. և

iii) Համակարգող մարմինը բավարար փաստարկներ է տրամադրել այն մասին, որ ինքը համապատասխան աշխատակազմ և ռեսուրսներ ունի հիշյալ միջոցառումների համար, որոնք գոհացնում են Բանկին:

2. Փակման օրը 2021 թ. դեկտեմբերի 30-ը:

<u>Բաժին IV. Այլ հանձնառություններ</u>

Ա. Մինչ Ծրագրի ավարտը Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի շրջանակներում կենսական նշանակություն ունեցող ճանապարհային ցանցի հիմնանորոգված ճանապարհային հատվածների պահպանության համար հատկացվեն և հասանելի լինեն բավարար բյուջետային միջոցներ:

ԱՌԴԻՐ 3

Պարտավորությունների հետ կապված մարման ժամանակացույց

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է Վարկի մայր գումարի մարման ամսաթվերը և մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվին վճարման ենթակա՝ Վարկի ընդհանուր մայր գումարի տոկոսը (Մասնավճար)։

Հավասար մասնավճարներով մայր գումարի մարումներ

Մայր գումարի մարման օր	**Մասնավճար**
Յուրաքանչյուր մայիսի 15-ին և Նոյեմբերի 15-ին՝ սկսած 2033 թ. նոյեմբերի 15-ից մինչև 2043 թ. մայիսի 15-ը	4.55%
2044 թ. մայիսի 15-ին	4.45%

ՀԱՎԵԼՎԱԾ

Սահմանումներ

1. «Հակակոռուպցիոն ուղեցույցներ» ընդհանուր պայմանների հավելվածի 5-րդ կետի նպատակներով նշանակում է՝ 2006 թվականի հոկտեմբերի 15-ով թվագրված և 2011 թ. հունվարին և 2016 թ. հուլիսի 1-ին վերանայված՝ «ՎԶՄԲ Վարկերի և ՄԶԸ փոխառությունների և դրամաշնորհների միջոցով ֆինանսավորվող ծրագրերում խարդախությունը և կոռուպցիան կանխարգելելու և դրանց դեմ պայքարելու ուղեցույցներ»:

2. «Բանկի երաշխիքների քաղաքականություն» նշանակում է՝ Բանկի գործառնական անվտանգության քաղաքականությունը և ընթացակարգերը՝ սահմանված Բանկի Գործառնական ձեռնարկում՝ OP/BPs 4.01, 4.04, 4.09, 4.10, 4.11, 4.12, 4.36, 4.37, 7.50 և 7.60 շրջանակներում, կամ նման այնպիսի քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք գործում են:

3. «Վտանգավոր տեղամասեր» նշանակում է՝ ցանկացած ճանապարհի երկայնքով բարձր վթարային հատված:

4. «Կատեգորիա» նշանակում է՝ սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի Ա կետի աղյուսակում ամրագրված կատեգորիա:

5. «Համագործակցության համաձայնագիր» նշանակում է՝ սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի բաժին I.A.3-ում նշված համաձայնագիր:

6. «Համակարգող մարմին» նշանակում է՝ սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի բաժին Դ,1(ա)(i)(Ա) բաժնում նշված մարմին:

7. «Թույլատրելի արտակարգ իրավիճակ» նշանակում է՝ ցանկացած իրավիճակ, որը պատճառ է դարձել կամ հավանաբար կարող է մարդածին կամ

բնական ճգնաժամի կամ աղետի հետ կապված տնտեսական և/կամ սոցիալական հակառակ ազդեցություն առաջացնել Վարկառուի համար:

8. «Արտակարգ իրավիճակներում կատարվող ծախսեր» նշանակում է՝ թույլատրելի ծախսեր, որոնք պահանջվում են ապրանքների, աշխատանքների և ծառայությունների հաստատված ցանկի արժեքը ֆինանսավորելու նպատակով և անհրաժեշտ են Ծրագրի 3-րդ մասի և Արտակարգ իրավիճակներում արձագանքելու գործառնական ձեռնարկի շրջանակներում Վարկառուի տարածքում ընտրված ճանապարհային հատվածում ներդրումներն իրականացնելու համար:

9. «Արտակարգ իրավիճակներում արձագանքելու գործառնական ձեռնարկ» նշանակում է՝ գործառնական ձեռնարկ, որը պետք է ներդրվի Վարկառուի կողմից Ծրագրի 3-րդ մասի համար՝ սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի բաժին I.Դ.1(ա)(i)-ի դրույթների համաձայն:

10. «Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակ կամ ԲՍԿՇ» նշանակում է՝ Վարկառուի՝ Բանկի համար ընդունելի շրջանակ՝ հրապարակված 2019 թ. մարտի 19-ին, որը պարունակում է ուղեցույցներ՝ ծրագրի իրականացման վայրի մասով Ծրագրի շրջանակներում առանձին ներդրումների համար բնապահպանական և սոցիալական որոշ միջոցառումների նախաձեռնություններ, այդ թվում՝ i) առկա բնապահպանական և սոցիալական պայմանների և Ծրագրի իրականացման արդյունքում առաջացող հավանական ուղղակի և անուղղակի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների և ռիսկերի որոշման ուղեցույցներ, ii) շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման և բնապահպանական կառավարման պլանների մշակման ուղեցույցներ՝ կիրառելի լինելու դեպքում, iii) բացահայտված յուրաքանչյուր բացասական ազդեցության մեղմացման միջոցառումների առաջադրում, iv) բացահայտված յուրաքանչյուր դրական ազդեցության խթանման միջոցներ, և v) բնապահպանական և սոցիալական մշտադիտարկման պլանների մշակման ուղեցույցներ՝ մեղմացման միջոցառումների կիրառմանը հետևելու համար, ինչպես ասված է, շրջանակը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի նախնական հաստատմամբ:

11. «Բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագիր» կամ «ԲՍԿԾ» նշանակում է՝ ԲՍԿՇ-ից ծագող Վարկառուի որևէ ծրագիր, որը պետք է մշակվի Ծրագրի իրականացման ընթացքում՝ նախքան Ծրագրի շրջանակներում շինարարական որևէ միջոցառման մեկնարկը, Բանկի համար ընդունելի ձևով:

12. «Ընդհանուր պայմաններ» նշանակում է՝ «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի Ընդհանուր պայմաններ ՎԶՄԲ ֆինանսավորման, ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար»՝ թվագրված 2018 թվականի դեկտեմբերի 14–ով:

13. «Կենսական նշանակություն ունեցող ճանապարհ» նշանակում է՝ Կենսական նշանակություն ունեցող ճանապարհային ցանցի բոլոր ճանապարհները, որոնք միասին կոչվում են «Կենսական նշանակություն ունեցող ճանապարհներ»:

14. «Կենսական նշանակություն ունեցող ճանապարհային ցանց» նշանակում է՝ առաջնահերթություն ներկայացնող ցանց, որը հիմնականում բաղկացած է մոտ 4,000 կմ երկարությամբ տեղական ճանապարհներից, ինչպես նաև հանրապետական նշանակության ճանապարհներից, որոնցով գյուղական համայնքները կապվում են առնվազն մեկ միջպետական ճանապարհի:

15. «ՏԿԵՆ» նշանակում է՝ Վարկառուի տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն կամ վերջինիս ցանկացած իրավահաջորդ, որը Բանկի համար ընդունելի է:

16. «Գործառնական ծախսեր» նշանակում է՝ հիմնավորված գործառնական ծախսեր (որոնք չէին կատարվի, եթե չիրականացվեր Ծրագիրը), որոնք կատարվում են ՏԾԻԳ-ի կողմից՝ կապված Ծրագրի իրականացման հետ, այդ թվում՝ հաղորդակցման, մատակարարումների, տպագրման և հրապարակման, ավտոմեքենաների շահագործման և պահպանության, գրասենյակի վերանորոգման, շահագործման և կոմունալ ծառայությունների, գրասենյակային սարքավորումների, կահույքի և հարմարությունների ձեռքբերման ու շահագործման, գրասենյակի գույքի ապահովագրման, Ծրագրի ֆինանսական աուդիտի, տեղական և միջազգային գործուղումների և վերապատրաստման ծախսերի (այդ թվում՝ հյուրանոցային, տրանսպորտային ծախսեր և օրապահիկ), բանկային գանձումների, անձնակազմի վարձատրության (այդ թվում՝ դրա հետ կապված հարկերի ու վճարների),

բացառությամբ քաղաքացիական ծառայողների վարձատրության, անձնակազմի ապահովագրության ծախսերի և սոցիալական փաթեթի ծախսերի, նյութատեխնիկական ծառայությունների հետ կապված ծախսերի և այլ ծախսերի, որոնց վերաբերյալ Բանկը կարող է տալ իր համաձայնությունը:

17. «Գործառնական ձեռնարկ» նշանակում է՝ Վարկառուի կողմից 2018 թ. հունիսի 15-ին պատրաստված ձեռնարկ, որը նշված է սույն վարկի մայր համաձայնագրի 2-րդ առդիրի I.Ա.2 բաժնում, որը կարող է ժամանակ առ ժամանակ լրամշակվել Բանկի համաձայնությամբ:

18. «Վարկի մայր համաձայնագիր» նշանակում է՝ մայր ծրագրի վարկի համաձայնագիր՝ կնքված Վարկառուի և Բանկի միջև 2013 թ. փետրվարի 11-ին (8229-ԱՄ), ինչպես որ լրամշակված է:

19. «Մայր ծրագիր» նշանակում է՝ վարկի մայր համաձայնագրի 1-ին առդիրում սահմանված Ծրագիր:

20. «Գնումների կանոնակարգեր» նշանակում է՝ Ընդհանուր պայմանների հավելվածի 85-րդ կետի համար «ՀԲ գնումների կանոնակարգերը IPF վարկառուների համար»՝ թվագրված 2016 թ. հուլիսով, վերանայված 2017 թ. նոյեմբերին և 2018 թ. օգոստոսին:

21. «Հիմնանորոգման և պահպանման պայմանագիր» նշանակում է՝ բազմամյա պայմանագիր՝ կնքված Վարկառուի կողմից ՏԿՏՏՆ միջոցով մասնավոր կապալառուի հետ, որը մասնավոր կապալառուին պարտավորեցնում է մեկ փաթեթով ստանձնել ճանապարհների հիմնանորոգման և պահպանման աշխատանքների իրականացման բոլոր փուլերը:

22. «Տարաբնակեցում» նշանակում է՝ Ծրագրի ներքո հողը կամքին հակառակ վերցնելու ազդեցություն, ինչը բացասաբար է անդրադառնում տուժած անձանց՝ 1) կենսամակարդակի վրա, կամ 2) ձեռք բերված կամ տիրապետման ներքո գտնվող տան, հողի (այդ թվում՝ շինության, գյուղատնտեսական նշանակության հողի և արոտավայրի) կամ որևէ այլ՝ անշարժ կամ շարժական գույքի նկատմամբ իրավունքի կամ եկամտի վրա՝ ժամանակավորապես կամ մշտապես, կամ 3) արտադրողական ակտիվների հասանելիության վրա՝ ժամանակավորապես կամ մշտապես, և 4)

բիզնեսի, զբաղվածության, աշխատանքի կամ նստավայրի կամ բնակության վայրի վրա՝ ժամանակավորապես կամ մշտապես:

23. «Տարաբնակեցման քաղաքականության շրջանակ» կամ «ՏՔՇ» նշանակում է՝ Վարկառուի կողմից պատրաստված փաստաթուղթ, որ հրապարակվել և հանրությանը հասանելի է դարձվել 2019 թվականի մարտի 19-ին, և որը սահմանում է ընդհանուր իրականացման ընթացակարգերը, մեղմացնելուն ուղղված միջոցառումները և Ծրագրի շրջանակում վերաբնակեցման մշտադիտարկման ընթացակարգերը, այդ թվում՝ վերաբնակեցման ծրագրերի պատրաստման ու իրականացման ընթացակարգերը, ինչպես որ նշված շրջանակը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի նախնական հաստատմամբ:

24. «Անվտանգ գյուղեր» նշանակում է՝ ծրագիր, որը միավորում է երթևեկության մեղմացման ճանապարհաշինարարական միջոցները, մայթերի շինարարությունը և կրթական ծրագիրը բարելավված ճանապարհների մոտակայքում գտնվող գյուղերում տեղակայված դպրոցներում՝ ճանապարհային վթարները կանխելու նպատակով. հատկապես այն վթարները, որոնց մասնակից են լինում ճանապարհներից օգտվողների խոցելի խմբերը՝ հետիոտները, երեխաները և տարեցները:

25. «Ստորագրման ամսաթիվ» նշանակում է՝ երկու ամսաթվերից վերջինը, երբ Վարկառուն և Բանկը ստորագրեցին սույն Համաձայնագիրը, և նման սահմանումը կիրառվում է Ընդհանուր պայմաններ բաժնի «Վարկային համաձայնագրի ամսաթվին» կատարվող բոլոր հղումների դեպքում:

26. «Ճանապարհային ոստիկանություն» նշանակում է՝ Վարկառուի գերատեսչություն, որը պատասխանատու է ճանապարհի անվտանգության համար, որը հիմնադրվել է Վարկառուի հմ. 166-Ն օրենքի համաձայն՝ հրապարակված «Պաշտոնական տեղեկագրում» 2005 թ. հուլիսի 8-ին:

27. «Վերապատրաստում» նշանակում է՝ այն խելամիտ ծախսերը, որոնք հաստատվել են Բանկի կողմից Ծրագրի շրջանակներում վերապատրաստումների և աշխատաժողովների համար՝ ներառյալ վերապատրաստումների և աշխատաժողովների մասնակիցների համար ուսման վարձը, ուղևորության և կացության ծախսերը, վերապատրաստողների և սեմինարների ընթացքում

զեկուցողների ծառայությունների հետ կապված ծախսերը, վերապատրաստումների և աշխատաժողովների համար միջոցների վարձակալության ծախսերը, վերապատրաստման և աշխատաժողովների մշակման և վերարտադրության ծախսերը և այլ ծախսեր, որոնք անմիջապես կապված են վերապատրաստման դասընթացի և աշխատաժողովների նախապատրաստման և իրականացման հետ (սակայն առանց ապրանքների և խորհրդատվական ծառայությունների):